

## ՊԱՐԲԵՐՍԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌՈՂՋԱՊԱՆԻՅ ԹԵՐԹ, կիսամսեայ նկարագրող հանդէս, հոկտեմբեր:— Այս նոր պարբերական հրատարակութեան նպատակը հետեւեալ կերպով է բնորոշում նրա հրատարակիչ-խմբագիր Բժ. Վ. Արծրունին. «Մեր թերթի նպատակն է տալ ժողովրդին դիւրամատչելի ձևով այն գիտելիքները, որոնք անհրաժեշտ են ամեն մէկին իր առողջութիւնը պահպանելու համար: Նա պէտք է արծարծի ժողովրդի բոլոր խտերի մէջ գիտութեան մշակութեան ու անհրաժեշտ առողջապահութեան ու բժշկութեան վերաբերեալ նա ձգտելու է ներշնչել ժողովրդին լուրջ հայեացքներ արգի առողջապահական պահանջներին մասին և այդպիսով պարթեցնել նրա մէջ ինքնապահպանութեան փրկարար գաղափարները»:

Առաջին երկու տետրակներին մէջ լոյս տեսած յօդուածներէց երկուսն է, որ թերթի գլխաւոր աշխատակիցը լինելու է ինքը խմբագիրը, որի ժողովրդականացնողական շնորհքի մասին առիթ է ունեցել մի քանի անգամ յիշել մեր ամսագիրը, էլ շինք ասում, որ մեր ընթացողներին ևս ծանօթ է յարգելի բժշկի այդ տաղանդը՝ «Մուրճ»-ում լոյս տեսած նրա յօդուածներէց: Չենք կարող չ'արտայայտել մեր համակրանքը նրա նոր ձեռնարկութեան առիթով, որին կատարեալ աջողութիւն ենք ցանկանում:

ԱՆԱՀԻՏ-ն իր վերջին համարում շարունակում է Յարութիւն Սվաճեանի մասին ուսումնասիրութիւնը:

Նոյն համարում տպուած է վերջերս հոռմի մեծ միտինգում ի նպաստ հայերի արտասանած՝ կոմս Անջելօ դը-Պուրբերնտի մի զեղեցիկ ճառի թարգմանութիւնը:

Պ. Չոպանեանը վերջերս հրատարակել էր իր Ֆրանսերէն թարգմանած «Հայ ժողովրդական երգեր»-ը: Այդ առիթով Ֆրանսիական թերթերը, Ֆրանսիայի զրական և քաղաքական գործիչներէց շատերը մեծ համակրանքով խօսեցին հայ բանաստեղծութեան, հայ ժողովրդական ստեղծագործող ոյժի մասին: Պ. Չոպանեանն այդ գրքի առիթով նամակներ ու շնորհատրական կրկնողներ է ստացել ժորժ Կլեմանսօից, Ջէյմս Բրայտից, Պիեր Լոտիէից, Ֆրեդերիկ Պասիէից, Միլլըրանից, կոմս Ալբեր Վանդալից, Ֆրանսիական հանրապետութեան նախագահի որդի Պոլ Լուրէից և այլ յայտնի մարդկանցից:

Սակայն չը պէտք է մոռանալ, որ քաղաքավարի Ֆրանսիացին այլ կերպ չէր էլ վարուիլ, երբ իրան նուէր են ուղարկում այդպիսի գրքեր: Սոսկ քաղաքավարական արտայայտութիւններին չը պէտք է շարժանք մեծ կարեւորութիւն տալ, մանաւանդ ունկալ գարձնել...

«Այնպիսի մը լեհահայոց վրայ» յօդուածից իմանում ենք, որ Անի քաղաքի յունաց ձեռքը անցնելուց և Քաղաքատունեաց անկումից ետքը հայերը խնդրած են Թէոդորոս դրսից գնալ բնակուել Լեհաստանում: 1062 թ. ակախներին Թէոդորոս դուքսը հրաւիրում է հայերին, որ զգան իրան օգնութեան, և նա կը տայ նրանց ազատութիւն: Անլի ևս մեծ գաղթականութիւն է դուրս գալիս Անիի շրջակայքից 1161 թ. ակախին, և Դրիմից՝ 1475 թ.: Չնորհիւ այդ գաղթականները՝ Լեհաստանում հայերի թիւը հասել էր 40 հազարի: Երկրագործութեան և վաճառականութեան շնորհիւ կարճ միջոցում լեհահայերը հարստացան և ազդեցիկ դիւր ձեռք բերին Լեհաստանում, շինեցին եկեղեցիներ, եպիսկոպոսարաններ, դպրոցներ, վանքեր և կուսանոցներ: Նրանց բնակավայրերն եղան գլխաւորապէս Լէոպոլիս, Ստանիսլաւ, Լիւցա, Տէրէժան, Դլամիլից, Սնէպոլին, Հոռոտէնքա, Չամուցա, Գուլից, Եաղովցա, Լուցկա, Չուանդա, Կամենից, Մոհիւով, Ռաշըով և Պալթա: Լեհահայերը իրանց հաւատարմութեան համար ստացան առանձնաշնորհումներ, որոնցից ամենանշանաւորը Գալիմիր Մեծի կողմից 1356-ին շնորհած դատաւորական իրաւունքն էր, կատարեալ ինքնավարական հիմքերով: Այդ իրաւունքը խստփանուեցաւ, երբ Լեհաստան 1799-ին երկր տէրութեանց մէջ բաժանուեցաւ: Յօդուածը վեջանում է հետեւալ տխուր եզրակցութեամբ.

«Բայց դժբախտաբար այսօր շատ նկուն վիճակի մէջ են (լեհահայերը) վասնզի հետզհետէ իրենց հայրենի լեզուն կորսնցընելու վրայ են, և շատ քիչ տեղ այժմ հայ բարբառը կը հնչէ: Եւ ի ներկայիս գանալանք քաղաքաց հայ եկեղեցիներուն ոմանք մէջ լեհ կամ լատին քահանայք կը պաշտօնավարեն և ոմանք այլ օտարաց ձեռքը անցած են, որով իրաւամբ կը վախցուի որ հայութեան այս հատուածը շատ մօտ ապագայի մէջ կորստեան անել անդունդը գլորի»...

ԲԱՋՄԱՆԳ, հոկտեմբեր.— Իտալահայ բանաստեղծուհի Վիկտորիա Ադանուրի ճեմաստեղծութիւններէ հրատարակութեան առիթով իտալացի Ռ. Գալլինիա մի բանախօսութիւն է արել, որ թարգմանութիւնը առաջ է բերուած ճեպագմակցում: Իտալացած հայուհու բանաստեղծութիւններով հիացած իտալացին իմիջիլ այլոց հետեւեալն է ասում.

«Իրքին առաջին մասը ինչպէս կ'ըսէ խորագիրը Leggenda Eterna—Յաւիտեանական գրոյց—քերթուած է սիրոյ. դժբախտ սէր, ի զերև ելած յոյսեր, կորսուած ուրախութիւններ: Պիտի զգար այս քերթուածներուն փափկութիւնը: Առաջինն մինչև վերջինը՝ երկայն հառաչ մը կը թուին: Պիտի ըզգար անպատմելի տխրութիւնը յուշքերուն. երջանիկ անցեալին: Պիտի զգար միլամադձութիւնը կծրձ ժամուն, վասն զի զիտէ թէ պիտի սրունայ: Եւ յետոյ, հետեւելով հատորին, Միչաւկեալին—Intermezzo—մէջ պիտի գտնէք հին արգելոցի մը անդորրութիւնը. ամառի միայնութիւնը. աշնան անձրևը, զարնան քողցրութիւնը: Յետոյ Չարքանուին—Risveglio—մէջ, ուր դրուած են ամենէն կորովի բանաստեղծութիւնները՝ անգուլ ճիւղ մարդոց որոնք կը տրնին ելլել վեր փառքի լեռը, մեծերուն ցնորքը, մահուան անդութ քրմահաճոյքը, խորհուրդը խոր գիշերուան: Զայնէրը խոր գիշերուան: Զիթ շիթ ճորումը աւելիլին կոնդերուն մէջ: Պտուկներուն բացուելը: Ծովուն ողբը: Մարգասպան ծանրաշնչութիւնը ճահիճներուն: Պիտի մղէք նա յուածքնիդ անտառի մը մէջ՝ ուր կը բնակի վհուկ կին մը. հին ամբողջի մը մէջ՝ ուր կը վիտան երազական հոգեգէշներ: Եւ երբ ձեր հոգին հետևի քերթողուհույն հոգիին հրաշալի այն ուղևորութեան մէջ, տողներուն քաղցըրահնչակ երաժշտութիւնը, երաժշտութիւնը մերթ յամբ մերթ շտապուն, մերթ տխուր մերթ դուարթ, մերթ տկար մերթ զօրաւոր, այնպէս ինչպէս կ'ուզէ գաղափարը, պիտի բարձրանայ

ձեր ականջին, հաճոյական, վճիտ աղ-  
բիւրի մը կարկաչին նման, ականա-  
կիտ աղբիւրի մը, որ՝ ես կը մաղթեմ՝  
չատ և շատ տարիներ պիտի պատմէ | տակալին ուրիշ առակներ մեզի՝ որ  
այնքան կը սիրենք զինքը, ուրիշ խօս-  
քեր ճշմարտութեան և երազանքի:

### ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Բանալով 1904 թ. բաժանորդագրութիւնը՝ «Մուրճ»  
ամսագրի խմբագրութիւնը չի ուզում ծածկել հասարա-  
կութիւնից այն հանգամանքը, որ այս տարի ևս նա չու-  
նեցաւ տարեկան բաժանորդների այն minimum-ը (1000),  
առանց որին անկարելի է հոգալ ամսագրի հրատարա-  
կութեան ամենասահմանափակ ծախքերն անգամ: 1903  
թւականին վճարող բաժանորդների թիւը հասնում էր  
780-ի:

Ամսագրիս բաժանորդների վիճակագրութիւնը այս  
տարի ևս ցոյց է տալիս, որ մեր կենտրոնները՝ Թիֆլիս  
և Բուգու, ինչպէս և հայաշատ գաւառական քաղաքնե-  
րը՝ Ալեքսանդրոպոլ, Շուշի, Գանձակ, Երևան, Բաթում,  
Ախալցխա՝ բաժանորդների աւելանալու տեսակէտից  
բաւական մեծ յամառութեամբ սառուցման կէտի  
վրայ են կանգնած... Այդ կողմից աւելի միտթա-  
րական երևոյթ է ներկայացնում Հիւսիսային Կովկասը  
և Ռուսաստանը, ուր տարէցտարի նկատելի կերպով ա-  
ճում է բաժանորդների թիւը, նոյնը կարելի է ասել և  
Պարսկաստանի մասին:

Պարտք ենք համարում մեր բաժանորդներին յայտ-  
նելու, թէ խմբագրութիւնից անկախ պատճառներով  
հնարաւոր չ'եղաւ տալ «Մուրճ»-ում Զոլայի «Ճշմարտու-  
թիւն» վէպի թարգմանութիւնը \*): Բացի այդ, մեր

\*) Նոյն պատճառով անկարող եղան այդ վէպը տպագրե-  
լու և՛ ոսերէն: